ԵԱՀԿ

**Եվրոպայում Անվտանգության և համագործակցության կազմակերպություն**
**Նախարարական խորհուրդ**
**Հելսինկի 2008**

**MC.DOC/3/08**
**5 դեկտեմբերի 2008**

**Տասնվեցերորդ հանդիպման երկրորդ օր**
MC(16) Journal N2, հարց՝ 8

## ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐ

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 60-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մենք՝ ԵԱՀԿ Նախարարական խորհրդի անդամներս, նշում ենք Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի 60-րդ տարելիցը (այսուհետև՝ Կոնվենցիա):

Մենք հաստատում ենք, որ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը ճանաչել է մարդկային ընտանիքի բոլոր անդամներին բնորոշ արժանապատվությունը և հավասար ու անկապտելի իրավունքները՝ որպես աշխարհում ազատության, արդարության և խաղաղության հիմք, ինչպես նաև կրկնում ենք Հելսինկիի եզրափակիչ ակտում ամրագրված համապատասխան հանձնառությունները:

Մենք վերահաստատում ենք Կոնվենցիայի՝ որպես ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի կարևոր միջազգային գործիքի նշանակությունը:

Մենք կոչ ենք անում մասնակից պետություններին, որոնք դեռևս չեն արել դա, դիտարկել, ինչքան հնարավոր է շուտ, Կոնվենցիայի անդամ և ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի այս համաշխարհային մեխանիզմի մաս դառնալը: Մենք այնուհետև կոչ ենք անում Կոնվենցիայի կողմերին ավելացնել և

ուժեղացնել իրենց գործողությունները՝ ուղղված Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորությունների ամբողջական իրականացմանը:

Մենք նշում ենք, որ Միավորված ազգերի կազմակերպությունը, ընդունելով Կոնվենցիան, ճանաչել է, որ ցեղասպանության հանցագործությունը զազրելի ոճիր է, որը մարդկությանը իսկայական կորուստներ է պատճառել և վստահ է եղել, որ ցեղասպանության հանցագործության արագ կանխարգելումը և պատիժը խթանելու համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն:

Մենք ճանաչում ենք, որ միջազգային իրավունքի համաձայն ցեղասպանությունը լրջագույն հանցագործություններից է, որը դատապարտվում է ողջ միջազգային հանրության կողմից և չի կարող երբևիցե արդարացվել: